

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

ԵՒ ԻՐ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔԸ

Գրիգոր Նարեկացին Հայ ժողովրդի միջնադարեան մեծադոյն քերթողներից մէկն է, որի հռչակը տարածուել է անգամ օտար ազգերի մէջ:

Ծնուել է 951 թուին, Վանայ լճին մօտիկ դիւղերից մէկում: Փոքր հասակից մտել է Նարեկ դիւղի վանքի դպրոցը եւ ուսումնս ստացել մօրեղբօր՝ փիլիսոփայ Անանիա Նարեկացու մօտ, որ վանահայրն էր Նարեկայ վանքի: Ահա արթնելից էլ առաջ է եկել Նարեկացի անունը: Մեռել է 1003 թուին եւ թաղուել նոյն վանքում:

Գրիգոր Նարեկացին թէեւ ունի մի շարք աշխատութիւններ, բայց դրանց միջից ամենից յայտնին «Գիրք Ազօթից» կամ «Մատեան Ողբերգութեան» պոէմն է, որ յայտնի է «Նարեկ» անունով:

Նարեկացու այդ քերթուածի մասին, շատ է խօսուել մեր դրականութեան մէջ, բայց մեզ թւում է ինչքան էլ որ խօսուի, դարձեալ ասելիք կայ դրա մասին: Ներկայ յօդուածով, մենք սէտք է աշխատենք տալ դրա հանդէպ Հայ ժողովրդի ունեցած մեծ սէրն ու հաւատքը, ինչպէս եւ դրա բազմաթիւ տպագրութիւնները համառօտ պատկերը, թէ քանի անգամ և երբ ու ուր ևն տպագրուել:

Նարեկը Հայ ժողովրդի ամենից շատ սիրուած ու նրա հանդէպ կրօնական հաւատքը ունեցած գրքերից մէկն է, որի համար ունեցած այդ սէրն ու հաւատքը, դալիս է շուրջ մէկ հազարամեակից առաջ:

Նարեկ աղօթագրքը, իր խորիմաստ մտքով, իր բազմաշունչ բովանդակութեամբ, զուրեկան ու հաճելի ընկալումով ևւ գրաբարեան քաղցր ոճով, միշտ էլ իր հանդէպ պահել է գերադանց այն սէրը, որին հայերէն եւ ոչ մի գիրք չի արժանացել դրա աստիճանին:

Անցեալը թողած, մի օրինակ բերե՛ք հիւնց այս օրեքից: Վերջերս տողերս գրողի մօտ եկաւ ութսուն տարին վաղուց անցած մի ծերունադարձ բարեկամ, ձեռքին բռնած 1774 թուին Կոստանդնուպոլսում տպագրուած մի Նարեկ եւ ցոյց տալով դրա մի քանի պակաս էջերը, ուղեց որ այդ գրքի մի լրիւ օրինակը, վանքի դրադարանից իրեն տամ, որպէսզի իր գրքի պակասաւոր էջերը լրացնելու համար լուստպատմէններ վերցնի:

Իմ հարցումին, թէ՛ այդ սպակասը ինչի համար է ուզում լրացնել, պատասխանեց .

— Թէ՛ կարողում եմ եւ թէ՛ դիշերները բարձիս տակ եմ դնում : Ահա մի պարզ օրինակ, որ վկայում է թէ՛ մեր ժողովուրդը ինչ-պիսի սէր ու ակնածանք է ունեցել Նարեկի հանդէպ : Դեռեւս շատ անհատներ, որոնք ծանօթ են դրաբարի քաղցր ոճին, աշխատում են դրան ընթերցելով իրենց մէջ վառ պահել այդ տէրը, ինչպէս որ ունեցել են մեր նախնիները, հարիւրաւոր տարիների ընթացքում :

Նարեկը կամ ինչպէս քերթողահայրն է ասում՝ Մատեան Ողբերգութեանը, որպէս աղօթագիրք ընթերցուելուց բացի, իր մէջ ունեցած բառերի ճոխ պաշարով եւ հոմանիչ բառերի առատ գործածութեամբ՝ մի ջերմ ոգեւորութիւն է առաջ բերում ընթերցողի եւ ունկընդի մէջ : Գիրքը մեծ մասամբ ժողովրդի կողմից սիրուել է նրա աղօթքների աղբեցութեամբ, որ ունեցել է զանազան հիւանդների եւ յատկապէս հոգեկան հիւանդութեամբ տառապողներին վրայ, իր կատարած բուժիչ յատկութեամբ :

Նախնական դարերում, երբ զեռ դիտական բժշկութիւնն ու բժիշկ-հիւանդանոցները գոյութիւն չունէին, եթէ՛ մի ոեւէ հիւանդ տնային բժշկական դանազան միջոցներով չէր առողջանում, եւ ըստիպուած էր լինում դիմելու եկեղեցական սուրբերի օգնութեանը, եկեղեցիներին ուխտի էր դնում, կամ նրանց ոտքը գնալով՝ շարաթներով ապաւինում էր այնտեղ : Ահա այդ ժամանակ էր, որ ամենադորեղ բժշկութիւնը սպասւում էր Նարեկից, որ պատշաճ դրուխների յատուկ առողջանութեամբ ընթերցումով հիւանդի դիրին՝ դառնում էր լաւագոյն միջոցը, հիւանդի կազդուրման սեւ առողջութիւնը վերադառնելու համար :

Եկեղեցիներին կից սենեակներից բացի, հայ ժողովուրդը նրա բժշկութեան աղբեցութիւնը տեսել է նաեւ տներում, որտեղ եւս հիւանդների դիրին, օրական կամ շաբաթական, յատկապէս Չորեքշաբթի, Ուրբաթ կամ կիրակնամտերին, մի քանի պլուխ Նարեկ կարդալով ու մօտը պահելով :

Նարեկի եւ նրա սրբակենցաղ հեղինակը Գրիգոր Նարեկացու հանդէպ տածած տէրը, այնքան է ողբւոքել սեղոնողներին, որ թէ՛ Գրքի եւ թէ՛ Հեղինակի համար, ստեղծել են մեծ թուով, բժշկական եւ այլ վարդի առասպելներ, ինչպէս՝ մորթուած ու տապալկուած աղանիներին շունչ տալն ու թոցնելը, կոյիւն ու եզան կենդանացնելը, ոտքով ծովի վրայ քայլելը եւ այլն :

Ժողովրդի նրա հանրէպ ունեցած սիրոյ պատճառով, Նարեկն ունեցել է մեծ թուով սուպերութիւններ, սկսեալ 17րդ դարից մինչեւ 20րդ դարը : Դրանք Կեղել են զանազան չարիով ու ծաւալով, ինչպէս եւ աշխարհաբարի թարգմանութեամբ ու վերլուծութիւններով :

Եթէ մի թեթեւ ակնարկ նետենք Վրանց վրայ, կը տեսնենք որ այդ տպագրութիւնների թիւն այնքան բարձր է, որ մինչեւ հիմա, հայ գրականութեան մէջ ոչ մի գիրք Վրան չի հասել:

Ինչպէս ասացինք, Նարեկի տպագրութիւնը սկսուել է 17րդ դարի 70ական թուականներից եւ շարունակուել մինչեւ այսօր: Ինչքան մեղ ծանօթ է առաջին տպագրութիւնը կատարուել է 1673 թուին Մարտէլում, իսկ վերջինը՝ 1985 թուին Երեւանում:

Նարեկը մինչեւ այժմ ունեցել է աւելի քան եօթանասուն տպագրութիւն, որոնք կատարուել են Մարտէլում, Կ. Պոլսում, Վենետիկում, Պետրոբուրգում, Երուսաղէմում, Չմիւռնիայում, Գահիրէում, Բուէնոս Այրէսում, Երեւանում, Թիֆլիսում, Դելմանում (Ա.Մ.Ն.) եւ Անթիլիասում:

Սրանց միջից ամենաչափ տպագրութիւնը կատարուել է Կոստանդնուպոլսում՝ 34 անգամ, սկսել 1700 թուականից մինչեւ 1956 թիւը: Եղել են ժամանակներ որ երկու տարի յաջորդաբար տպագրուել է կամ մէկ տարուան ընթացքում երկու անգամ, ինչպէս 1850 թուականին:

Վենետիկում Նարեկը տպագրուել է 15 անգամ, իսկ 1827 թուին՝ երկու անգամ, Նարեկացու միւս բանաստեղծութիւնների հետ, 487 եւ 586 մեծադիր էջերով, որոնցից վերջինը՝ մեկնաբանութեամբ Հ. Գ. Աւետիքեանի:

Երուսաղէմում տպագրուել է 9 անգամ, Երեւանում 4 անգամ, Չմիւռնիայում՝ երեք, Բուէնոս Այրէսում՝ երկու, իսկ միւս քաղաքներում մէկական անգամ:

Այս տպագրութիւններից բացի, կան նաեւ Նարեկացու միւս քերթուածների, տաղերի եւ այլ գրութիւնների տպագրութիւնները, ինչպէս եւ իր զանազան ստեղծագործութիւնների մասին ուսումնասիրական գրքեր եւ կենսագրութիւններ: Իր մասին եղած յիշատակումների թիւը շատ մեծ է հայ գրականութեան մէջ:

Նարեկը թարգմանուել է նաեւ այլ լեզուներով եւ իր ունեցած բարձր ոգու թոխչքով ու վերասլացումով՝ հիացում է պատճառել շատերին: Վերջին տարիներում՝ 1986 թուին, լոյս տեսաւ նաեւ դրա պարսկերէն թարգմանութիւնը՝ Ա. Մաթեանի աշխատութեամբ:

Կատարուել է նաեւ մի քանի գրաբարից-աշխարհաբարի թարգմանութիւնը, որոնցից առաջինը տպագրուել է 1895 թուին «Մաղիկ» հանդէսում, բայց մնացել է թերի: Երկրորդ թարգմանութիւնը կատարուել է 1899 թուին, Միսաք Գոչուենեանի կողմից, որ նախ տպագրուել է «Մամգուսէ» թերթում, ապա 1902 թուին տպագրուել է առանձին գրքով, Կոստանդնուպոլսում:

Սրանցից բացի, զանազան պարբերականների մէջ նա, մի քանի անգամ, տպագրուել են որոշ հատուածների թարգմանութիւնները,

իսկ երկրորդ ամբողջական թարգմանութիւնը կատարուել է Թորգոմ Եպս. Գուշակեանի կողմից եւ սպազորուել 1926 թուին, Գահիրէում: Թարգմանութիւններից յիշենք նաեւ Գարեգին Եպս. Տրապիզոնցու կատարածը, որ սպազորուել է 1948 թուին Բուէնոս Այրէսում:

Վերջին թարգմանութիւնները կատարուել են Երեւանում, նախ Մկրտիչ Խէրանեանի կողմից, որ սպազորուել է 1960 թուին, իսկ յետոյ Վարդէն Գէորգեանի կողմից, որն ունեցել է երկու սպազորութիւն, 1970 եւ 1979 թուականներին: 1960 թուի սպազորութիւնը, ինչպէս եւ մի քանի այլ սպազորութիւններ, կատարուել են պոէմայի ձեւի տողատումով, իսկ անցեալի դրաբար սպազորութիւնները՝ որոշ էջերում ստացել են խաչի, սկիհի եւ բաժակի ձեւ:

Նարեկի մեկնութիւններից յատուկ յիշատակութեան արժանի է Թուրքիոյ Հայոց Պատրիարք Յակոբ Նայեանի կատարած կոթողական աշխատութիւնը, որ սպազորուել է 1745 թուին Կ. Պոլսում եւ ունի 1136 մեծադիր էջ: Այս դրքում «Նարեկի»-ից բացի, մեկնաբանուել են նաեւ նրա դանձերն ու տաղերը:

Որպէս անցեալի մի քաղցր վերյիշում, ստորեւ գրաբար «Նարեկի»-ից առաջ ենք բերում մի հատուած, որպէսզի մէկ անգամ եւս մտքով վերադառնանք դէպի անցեալի դարերը, երբ Նարեկն իր վերսոյաց ոգով ու մտքով, այնքան մօտ էր հայ հաւատացեալներին հոգուն ու սրտին:

Վերստին յաւելումս կրկին հեծուքեան, նորին հսկողի, առ նոյն ազերս մազքամաց բանի: Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ.

Բան Գ.

Տէր իմ, տէր, տուիչ պարզեւեաց, ինքնաբուն բարի,
Ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ գրանս յոչէից,
Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու,
Սոսկալի, հզօր, սաստիկ,
Անտանելի, անմերձանալի, անիմանալի,
Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի,
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,
Անշամանդաղ գիտութիւն, բարձր եւ խոնարհ,
Օրհնաբանելի գոյութիւն, անստուեր ծագումն,
Ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս,
Անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանդիստ,
Անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վիպեալ անուն,
Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան,
Հաստիչ հոգւոց հաց, օտար մթութեանց տէր:

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ